



ԱՐՄԻՆԵ ՄԻՆԱՍՅԱՆ

ՀՊՏՀ միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրության գործունեության կազմակերպման ամբիոնի հայցող

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊՏՈՒԴԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հոդվածում քննարկվում են գյուղատնտեսական մթերքների վերամշակման հիմնախնդիրները, պտուղբանջարեղեն վերամշակող արդյունաբերության զարգացման խոչընդոտները և դրանց հաղթահարման ուղիները:

Վերլուծվում են պտուղբանջարեղենի արտադրության և վերամշակման ծավալները, կազմն ու կառուցվածքը, ներկայացվում են նաև ոլորտում առկա ռիսկերի գործոնները և կառավարման հիմնական միտումները:

Հիմնաբառեր. գյուղատնտեսություն, պտուղբանջարեղեն, վերամշակում, մթերման ծավալներ, պահածոներ, մթերում, արտադրական հզորություններ, ռիսկեր, ռիսկերի կառավարում

Սննդամթերքի արտադրությունը վերջին տասնամյակում աճել է աշխարհի գրեթե բոլոր տարածաշրջաններում, սակայն պարենի գների ճգնաժամը լուրջ հիշեցում եղավ համաշխարհային պարենային անվտանգության խոցելիության, հատկապես զարգացող երկրներում արտադրական ներուժի զարգացման և ռիսկերի արդյունավետ կառավարման մասին:

Գյուղատնտեսության ոլորտը բախվում է մի կողմից՝ արտադրության ծախսերի աճի, մյուս կողմից՝ զարգացող տարածաշրջանների սպառողների պահանջարկի արագ աճի և գների հետագա բարձրացման հետ: Այդ միտումներն ավելի են սրվում կենսավառելիքի արտադրության ընդլայնման, կլիմայական փոփոխությունների և բնակչության աճին զուգահեռ:

Հանրապետության ագրոպարենային համակարգը երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի և պարենային անվտանգության գործում մեծ դեր ունի:

Զնայած մեր երկիրը գյուղատնտեսության ոլորտն ընդունել է գերակա ուղղություն, այդուհանդերձ, արտադրության ծավալներով դեռևս զգալիորեն

գիջում է հարևաններին: Մասամբ նաև տեղանքի կտրտվածության և բնակլիմայական գործոններով պայմանավորված՝ հայկական գյուղմթերքը երբեմն ունենում է ավելի բարձր ինքնարժեք:

Գյուղատնտեսական մթերքների շարժը տարածաշրջանի երկրների միջև ակտիվ չէ, թեև առկա են զգալի նախադրյալներ: Այդուհանդերձ բոլոր երկրներն էլ գյուղատնտեսական մթերքների արտահանման ուղղվածություն ունեն:

Երկրները տեղական արտադրողներին պաշտպանելու նպատակով կիրառում են ներմուծման սահմանափակման՝ քվոտավորման և լիցենզավորման գործիքներ, սակայն մրցունակության վրա ազդում են նաև հաղորդակցուղիների խնդիրները, փոխադրման մեծ ծախսերը և լոգիստիկ համակարգերի բացակայությունը, գյուղմթերքի արտադրության փոքր ծավալները, մարքեթինգային հետազոտությունների ցածր մակարդակը և այլն:

Այնուամենայնիվ, մեր երկրում առկա նախադրյալներն, ըստ էության, նպաստավոր են տեղական գործարարների համար գյուղատնտեսության մեջ ծավալուն ներդրումներ կատարելու, ճյուղը տեխնիկապես և տեխնոլոգիապես նորացնելու, արտաքին շուկաներում նկատելի դերակատարում ունենալու առումով:

Պտուղբանջարեղեն վերամշակող արդյունաբերությունը ՀՀ տնտեսության կարևորագույն բնագավառներից մեկը և ագրարային ոլորտի զարգացման խթանն է՝ նպաստելով պարենային, տնտեսական անվտանգության և ագրոպարենային շուկայի ձևավորմանը, ինչպես նաև ապահովելով ազգաբնակչությանն անվտանգ, որակյալ մթերքների երաշխավորված ու կայուն մատակարարումը:

Վերջին տարիներին այս բնագավառում նկատելի են ռիսկեր, որոնց, շատ դեպքերում, պատշաճ ուշադրություն չի դարձվում: Զարգացմանը դեռևս խոչընդոտում են ներկայիս մշակաբույսերի սորտային կազմի ոչ ամբողջական համապատասխանությունը վերամշակող արդյունաբերության և շուկայի պահանջներին, մշակության ագրոտեխնիկայի ոչ բավարար քանակը, այգիների նոսրության բարձր աստիճանը:

Թեև պետական աջակցությամբ զգալի աշխատանքներ են կատարվել ոռոգման համակարգերի վերականգնման և զարգացման ուղղությամբ, սակայն այս բնագավառում դեռևս առկա են խնդիրներ, որոնք խոչընդոտում են վերամշակող արդյունաբերության զարգացումը: Դրանցից են՝

- 1) որակյալ և կայուն հումքային բազայի ապահովման դժվարությունները,
- 2) առաջավոր տեխնոլոգիայի ներդրման դանդաղումը,
- 3) մատչելի պայմաններով վարկային միջոցների ապահովումը,
- 4) արտահանման ծավալների ավելացումը և արտաքին շուկաներում հաստատվելը,
- 5) օրենսդրական դաշտի համապատասխանեցումը միջազգային չափանիշներին և այլն:

Վերը նշված հիմնախնդիրներին ավելանում են գյուղմթերքի իրացման շուկաների որոնման դժվարությունները, որը պայմանավորված է մի կողմից՝ տեղական շուկայում դեռևս ցածր վճարունակությամբ, մյուս կողմից՝ գյուղատնտեսական մթերքներ գնող-իրացնող-վերամշակող ենթակառուցվածքների անկատարությամբ:

Հայաստանի արդյունաբերական արտադրանքի շուրջ 35%-ը (ներառյալ՝ ծխախոտի արտադրությունը) ապահովում է ագրովերամշակող արդյունաբե-

րությունը: Այն բավականին բազմազան է, ունի արտահանման միտվածություն և ընդգրկում է սննդարդյունաբերության գրեթե բոլոր ոլորտները, որոնցից առավել մեծ են խաղողի, պտուղաբանաբերության և ծխախոտի վերամշակման ճյուղերի ծավալները: Միաժամանակ, նշված ոլորտներում տեղակայված արտադրական հզորությունները դրանց զարգացման և արտադրության ծավալների ավելացման մեծ ներուժ են պարունակում, քանի որ ներկա դրությամբ օգտագործվում է առկա արտադրական հզորությունների մինչև 50%-ը:

Ագրովերամշակող ընկերությունները գյուղացիական տնտեսությունների հետ հիմնականում աշխատում են երկարաժամկետ պայմանագրով, ինչն աճեցրած բերքի իրացման, արտադրության ճիշտ կազմակերպման և արտադրության ծավալների ավելացման կայուն երաշխիք է¹:

Այսօր գործում են վերագործարկված կամ նոր ստեղծված 37 պահածոների, 45 գինեգործական, ավելի քան 4 ծխախոտի վերամշակման ընկերություններ: Դրանք հիմնականում ձևավորվել են ագրովերամշակման ոլորտում շուկայական մրցակցության մեծացման, տեխնոլոգիական վերազինման, մեծածավալ ներդրումների, համատեղ ձեռնարկությունների ստեղծման և վարկային միջոցների ներգրավման շնորհիվ:

Հայաստանում գյուղատնտեսական մթերքի վերամշակումից ստացվող արտադրատեսակների՝ 2008–2013 թվականների արտադրության ծավալները ներկայացված են աղյուսակ 1-ում²:

Աղյուսակ 1

«Գյուղատնտեսական մթերքի վերամշակումից ստացվող արտադրատեսակների արտադրության ծավալները 2008-2013 թթ.»

	Չափի միավոր	Արտադրություն					
		2008	2009	2010	2011	2012	2013
Պահածոներ*							
այդ թվում՝	տոննա	12 936	7 629	8 025	11772,6	9 134	9 867
բանջարեղեն	տոննա	3126,3	2832,6	4558,7	4248,2	2951,2	2692
տոմատ	տոննա	4167,2	2656,8	1823,2	4944,8	2738,9	2837
միրգ	տոննա	4739,9	1364,7	1130,4	2293,4	2666,1	3356
Բնական հյութեր ընդամենը							
այդ թվում՝	հազ. լիտր	6657,4	7478,1	11689,5	14615,2	16741,6	19542
մրգահյութեր	հազ. լիտր	6348,5	7253,5	11366,6	14111,3	16138,3	18924,2
տոմատի հյութ	հազ. լիտր	308,9	224,6	322,9	503,9	603,3	618,4
Օղի և օղու լիկորի արտադրանք							
այդ թվում՝	հազ. լիտր	12204,4	13278,1	11911,7	9187,5	10098,2	9938,1
կոնյակ	հազ. լիտր	16025	9869	12624,1	15380,5	18514,1	20284
գինի	հազ. լիտր	3342,9	4424,4	5812	6191,5	5718	6422
շամպայն գինի	հազ. լիտր	464,4	456,4	618,2	623,1	478,8	536

* Ներառված են նաև մսի, ձկան և խեցգետնից պատրաստված պահածոները:

¹ Ներկայումս գյուղատնտեսության ապրանքայնության մակարդակը 56% է:

² Աղբյուրը՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարություն:

Աղյուսակի տվյալներից երևում է, որ պահածոների արտադրության ծավալները դեռևս չեն հասել նախաձգնաժամային՝ 2008 թ. ցուցանիշներին:

Հանրապետության վերամշակող արդյունաբերության ընկերությունների՝ 2008-2013 թվականներին պտղի, բանջարեղենի և խաղողի գնումների ծավալները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

«Վերամշակող արդյունաբերության ընկերությունների՝ 2008-2013 թթ. պտղի, բանջարեղենի և խաղողի գնումների ծավալները»

Հ/հ	Հումքի անվանումը	Մթերման ծավալները ³ (տոննա)					
		2008	2009	2010	2011	2012	2013
1.	Պտուղ ընդամենը	19406.0	11254.9	3626.5	14285,7	25620.0	28791.5
	այդ թվում՝ խնձոր	2645.5	2107.0	614.1	2735,7	4767.0	5187.8
	դեղձ	6952.9	1928.2	193.3	1745,7	6163.4	1921
	ծիրան	7514.4	4641.1	557.4	2830,6	8854.1	13038.6
	կեռաս, սալոր, բալ	1029.4	1051.5	881.3	1203,8	1454.9	2079.6
	ընկույզ	132.8	151.2	254.0	339,1	213.0	232.7
	հատապտուղ	347.7	423.0	398.9	1093,0	752.0	1714.4
	այլ պտուղ	782.9	952.9	727.5	4337,9	3416.0	4617.4
2.	Բանջարեղեն	38999.1	32308.5	29681.8	50987,5	33645.8	27970.0
	այդ թվում՝ լոլիկ	35480.5	29749.0	24313.0	44209,0	26229.0	18970.0
	վարունգ	470.4	526.3	1137.0	409,2	355.5	468.5
	սմբուկ	1305.0	745.3	1865.0	2431,0	2021.0	2324.0
	պղպեղ	649.0	257.0	784.0	1097,0	2313.0	2455.0
	լոբի, ոլոռ	311.0	338.0	209.0	189,0	831.0	1612.0
	այլ բանջարեղեն	782.9	693.2	1374.6	2651,6	1896.8	2140.6
3.	Խաղող ընդամենը	137356.0	127740.0	134968.4	128927,4	156590.2	167184.7
	Ընդամենը	195761.1	171303.4	168276.7	194200,6	215856.0	223946.3

Մթերվող ամբողջ բանջարեղենի 77–92%-ը կազմում է լոլիկը, իսկ պտղի 37–88%-ը՝ ծիրանը, դեղձը և խնձորը: Մթերվում է հանրապետությունում արտադրվող պտղի և բանջարեղենի համապատասխանաբար՝ 3.8 և 19.9%-ը:

Հայաստանի բուսաբուծության արտադրանքի ծավալների վրա ազդող գլխավոր գործոնը բնակլիմայական պայմաններն են: Ջերմաստիճանի կտրուկ տատանումները կարող են 1–2 օրերի ընթացքում վճռել ամբողջ տարվա բերքի ճակատագիրը: Ջերմաստիճանային անկումների նկատմամբ հատկապես զգայուն են բազմամյա տնկարկները՝ պտղի և խաղողի այգիները: Դիտարկումները վկայում են անցանկալի օրինաչափության մասին. միջին հաշվով երեք տարին մեկ անգամ պտղի այն տեսակները, որոնք ծաղկում են ավելի վաղ, զոհ են գնում եղանակային անբարենպաստ պայմաններին: Դրանք հիմնականում այն պտուղներն են, որոնք ունեն ավելի մեծ պահանջարկ և արտահանման ավելի մեծ հնարավորություններ (ծիրան, դեղձ):

Մրգերի վերամշակման բնագավառում գործող մոտ 30 ընկերություններից առաջին 5-ին բաժին է ընկնում մթերումների մոտ 75%-ը: Վերամշակող ձեռնարկությունների գերակշիռ մասը տեղակայված է հումքի «արտադրա-

³ ՀՀ գյուղատնտեսության նախարարության տվյալներն են:

կան բազայում»՝ Արարատյան դաշտավայրում (Արարատի և Արմավիրի մարզեր):

Բանջարեղենի վերամշակման բնագավառն աչքի է ընկնում կենտրոնացվածության բարձր մակարդակով, քանի որ ոլորտի 5 առաջատար ձեռնարկություններին բաժին է ընկնում բանջարեղենի մթերումների գրեթե 96%-ը:

Տեղական շուկայի պահանջարկը կազմում է արտադրվող պտուղբանջարեղենային պահածոների ընդհանուր ծավալի 20–45%-ը, խաղողի հումքով ոգելից խմիչքներինը՝ մինչև 12%-ը, իսկ արտադրանքի մնացած մասը մշտապես արտահանվում է:

Բացի պահածոների արտադրության կազմակերպություններից, Հայաստանում գործում են նաև չորացրած մթերք արտադրող մոտ 100 փոքր ձեռնարկություններ: Վերամշակման նպատակով մրգերի և բանջարեղենի ընդհանուր մթերումների մեջ այս ձեռնարկությունների բաժինը կազմում է ընդամենը 2–5%:

Չնայած չորացրած մթերքի արտադրությամբ զբաղվող սուբյեկտների համեմատաբար մեծ թվին, նրանց կողմից թողարկվող արտադրանքի քանակը խիստ փոքր է՝ տարեկան 200–300 տոննա՝ 1,000 տոննա ներքին պահանջարկի դեպքում (տեղական արտադրողները ապահովում են պահանջարկի 20–30%-ը):


Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանի բանջարեղենային շուկայում գերիշխում են ներմուծված սորտերը: Հիմնվելով մանրածախ ցանցում կատարված ուսումնասիրությունների վրա՝ կարելի է նշել, որ շուկայում առկա սերմերի միայն 9%-ն է տեղական արտադրության, իսկ 91%-ը ներմուծված են:

Սերմերի արտադրությամբ զբաղվող ֆերմերների գիտելիքները սահմանափակ են, հետևաբար արտադրվող սերմնացուի քանակը մեծացնելու և որակը բարելավելու համար անհրաժեշտ է զարգացնել նրանց իմացությունն այս ոլորտում:

Բացի այդ, կլիմայի փոփոխության հետևանքները պահանջում են փոփոխել նաև հողագործության համակարգերը: Անհրաժեշտ է բարձրացնել արտադրողականության մակարդակը կլիմայի փոփոխությանը հարմարեցված և բարելավված սորտերի որակյալ սերմացու ապահովելու միջոցով: Այս առումով հարկ է նշել, որ հիբրիդային սերմերը տարածված են, քանի որ ապահովում են բարձր բերքատվություն, թեև, որպես կանոն, հաջորդ տարում զգալիորեն նվազում է արտադրողականությունը:


2010-ին անբարենպաստ կլիմայական/եղանակային պայմանների պատճառով բերքատվությունը նվազեց՝ հասնելով 294.4 գ/հա-ի, այնուհետև դանդաղ տեմպերով սկսեց ավելանալ. 2012 թ. միջին բանջարանոցային մշակաբույսերի բերքատվությունը կազմեց 325.0 գ/հա: 2013 թ. բանջարանոցային մշակաբույսերի միջին բերքատվությունը կազմել է 333,7 գ/հա, իսկ պտղի և հատապտղի բերքատվությունը՝ 95 գ/հա:

Այնուամենայնիվ, ի տարբերություն պտուղ - հատապտուղների, մասնագետները կարծում են, որ Հայաստանում բանջարեղենի բերքատվության ցուցանիշը բավարար է, քանի որ բանջարեղենի ընտրված տեսակների մեծ մասն արտադրվում է Արարատյան դաշտավայրի երկու մարզերում, որտեղ ավանդաբար ֆերմերները մասնագիտացված են, ուստի առկա է արդյունավետության բարձր մակարդակ:



Գծապատկեր 1. Պտուղբանջարեղենի միջին բերքատվությունը 1993-2012 թթ.

Քննարկենք իրավիճակը պահածոյացման բնագավառում, որի շարժընթացը ներկայացված է գծապատկերում.



Գծապատկեր 2. Պահածոների արտադրության շարժընթացը 2004-2012 թթ.⁴

Պահածոների արտադրական ծավալները բավականին անկայուն էին. 2004 թ. նվազելով ավելի քան 50%-ով՝ 2003 թ. 17 հազ. տոննա տարեկան արտադրանքի դիմաց թողարկվել է ընդամենը 8 հազ. տոննա, այնուհետև, 2006 թ.՝ հասել նոր գագաթնակետի՝ 14 հազ. տոննա:

Սա այն ժամանակահատված էր, երբ ՀՀ վերամշակող ձեռնարկությունները պետական և միջազգային ծրագրերի աջակցությամբ ակտիվորեն փորձեցին գտնել արտահանման նոր շուկաներ և հասան որոշակի հաջողությունների:

2007-2008 թթ. որոշակի դրական միտում գրանցվեց, որին հաջորդեց 2009 թ. զգալի անկումը՝ պայմանավորված համաշխարհային ֆինանսա-

⁴ Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական տարեգրքեր՝ 2005–2012 թթ.:

տնտեսական ճգնաժամով: Դա մեծապես ազդեց նաև Հայաստանի վերանշակող արդյունաբերության վրա՝ կրճատելով արտահանման, ձեռք բերվող հումքի (23%-ով ավելի պակաս) և պատրաստի արտադրանքի ծավալները:

Հայաստանում արտադրված պահածոների ծավալը 2013 թ. կազմել է 9867.3 տոննա, որը 2012 թ. համեմատությամբ ավելացել է 8.0 տոկոսով: Կառուցվածքային առումով, 2013 թ. բանջարեղենի պահածոների ծավալը, նախորդ տարվա համեմատությամբ, նվազել է 259.2 տոննայով, տոմատի պահածոներինը ավելացել է 98.1 տոննայով, իսկ մրգի պահածոներինը՝ 689.9 տոննայով:

Հարկ է նաև նշել, որ բանջարեղենի վերամշակման համեմատաբար նոր մեթոդ է սառեցումը, որը Հայաստանում առաջին անգամ կիրառվել է 2002 թ. (սառեցվում են՝ կանաչ լոբի, լոլիկ, սմբուկ, կանաչ և կարմիր պղպեղներ, կանաչեղեն և այլն):

Բանջարեղենի վերամշակմամբ զբաղվող գրեթե բոլոր ընկերությունները պահածոների արտադրության մեջ կիրառում են ստանդարտ տեխնոլոգիաներ, որոնց համապատասխանությանը հետևում են ՀՀ էկոնոմիկայի նախարարության իրավասու կառույցները, այդ թվում՝ Ստանդարտների ազգային ինստիտուտը: Յուրաքանչյուր արտադրանք պետք է ունենա իր սերտիֆիկատը (ՉՕՍՍ, ՀՍՍ), որը նկարագրում է արտադրանքի բաղադրությունը, սննդարարության արժեքը:


Հատկանշական է, որ բանջարեղեն վերամշակող ընկերությունների մեծ մասն արտադրում է պահածոների լայն տեսականի, թեև դրանցից մի քանիսը՝ սահմանափակ ծավալներով: Գրեթե բոլոր ընկերություններն ունեն անհրաժեշտ հզորություններ, ռեսուրսներ ու սարքավորումներ՝ իրենց տեսականու արտադրությունն անհրաժեշտ ծավալներով իրականացնելու համար: Ոլորտի վերամշակման հզորությունները էապես թերբեռնված են՝ աշխատելով 13–16%-ի սահմաններում:

Խոշոր ընկերությունների արտադրական գործընթացները հիմնականում մեքենայացված են, մինչդեռ փոքր ու միջին ծավալներով գործողները օգտագործում են հիմնականում ձեռքի աշխատանքը: Վերամշակողների հիմնական մասը որակի վերահսկումն իրականացնում է պատշաճ կերպով, սակայն երբեմն բացակայում են որակի կառավարման միասնական համակարգերը: Խոշոր վերամշակող ընկերությունները հատկապես աչքի են ընկնում հումքի մթերման կազմակերպման հարցում, քանի որ գործ են ունենում ավելի խոշոր ֆերմերների հետ, և առկա է բավարար փորձ:

Բանկային ֆինանսավորման (վարկավորման) հասանելիությունը շարունակում է խնդիր մնալ բարձր տոկոսադրույքների, վարկային գործընթացի և փաստաթղթաշրջանառության ծավալի առումներով: Վերամշակող կազմակերպությունների մոտ 70%-ն ունի զարգացած առաքման համակարգ՝ ներառյալ առաքող մեքենաներ, երկրի ողջ տարածքում գործող առաքման ցանց: Միևնույն ժամանակ, վերամշակողները գիտակցում են, որ տեղական շուկայում վաճառքը չի կարող զգալիորեն աճել փոքր ծավալների և գնող-ունակության ցածր մակարդակի պատճառով, ուստի արտահանումը շարունակում է առաջնահերթ ուղղություն մնալ:

2012 թ. պտուղբանջարեղեն վերամշակող ընկերությունների ընդհանուր վաճառքի մոտ 65.4%-ը բաժին է ընկնում տեղական շուկային, իսկ 34.6%-ը՝ արտահանմանը: Ինչպես երևում է գծապատկերից, նշված տարում արտա-

համանման ծավալները նախորդ տարվա համեմատությամբ աճել են: 2013-ին դիտարկվող ցուցանիշները եղել են 27.8/72.2 համամասնությամբ:



Չճապատկեր 3. Պտուղ-բանջարեղենի արտահանման և իրացման կառուցվածքը 2011-2012 թթ.

Պտուղբանջարեղենի վերամշակման մեջ վերահսկվող գործոնները հայտնի են, և հնարավոր զարգացումները հիմնականում կապված են ռիսկերի հետ, որոնք ստեղծում են անբարենպաստ իրավիճակներ՝ հանգեցնելով բերքատվության նվազման:

Մեր կարծիքով՝ գոյություն ունեցող ռիսկի հիմնական պատճառներն են՝

- պտուղբանջարեղենի արտադրության և վերամշակման գիտելիքների պակասը,
- ավանդական ենթակառուցվածքների թերությունները և կառավարման փորձի պակասը,
- բազմազանեցման ոչ բավարար մակարդակը և տեղեկատվական համակարգերի թերությունները,
- պետական պատվերի պակասը և թերի քաղաքականությունը՝ հատկապես պետական աջակցության առումով:

Կարծում ենք՝ ոլորտի ռիսկերի կառավարման հիմնական ուղղություններ պետք է լինեն.

- վերամշակող կազմակերպություններին աջակցությունը,
- առաջավոր տեխնոլոգիաների ներդրումը և արտադրանքի մրցունակության մակարդակի բարձրացումը,
- մարքեթինգային աջակցությունը և հումք արտադրողների հետ պայմանագրային հարաբերությունների զարգացման խթանումը,
- իրացման շուկաների ընդլայնումը և նպատակադրված երաշխիքային (ապահովագրական) քաղաքականությունը:

Ակնհայտ է, որ արտաքին շուկայում շարունակ աճում է պարենամթերքի նկատմամբ պահանջարկը, և տարեցտարի մեծանում են հայկական բերքի ճանաչվածությունն ու պահանջարկը: Այս հանգամանքը հիմք է դառնում վերամշակող ձեռնարկության համախմբի (քլաստեր) կազմավորմանն ուղղված ծրագրերի և ռիսկերի արդյունավետ կառավարման համակարգի մշակմանն ու իրականացման համար:

АРМИНЕ МИНАСЯН

Соискатель кафедры „Микроэкономики и организации
производственной деятельности“ АГЭУ

Проблемы производства и переработки фруктов и овощей в Республике Армения. - В статье обсуждаются проблемы переработки сельскохозяйственных продуктов, существующие барьеры на пути развития перерабатывающей промышленности фруктов и овощей и пути их преодоления.

В статье анализируются существующие объемы, состав и структура производства и переработки фруктов и овощей. Представлены также факторы риска в сфере переработки фруктов и основные пути управления.

ARMINE MINASYAN

Researcher at the Chair of „Microeconomics and
Production Management“ at ASUE

Some Issues Concerning the Production and Processing of Fruit and Vegetables in the Republic of Armenia. - The article discusses the problems of agricultural processing barriers in the development of fruit and vegetables processing industry and the ways of overcoming them.

The paper analyzes the existing volume, composition and structure of production and processing of fruit and vegetables. Risk factors and major routes for the management in the fruit and vegetable processing industry have been presented.